# ՔԱՂՎԱԾՔ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2019 թվականի սեպտեմբերի 6-ի նիստի N 1 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.-** Գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի նիստում (արձանագրություն N 10) հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգում» փոփոխություններ և լրացում կատարելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Վ.Գրիգորյան:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-**

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Գ.Ա.Նազարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-**

**1.** Գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի նիստում (արձանագրություն N 10) հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգում» կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

**1)** 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14. Առաջին և երկրորդ կիսամյակներում առարկայական տարբերությունների հանձնումն իրականացվում է մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը (առավելագույնը մեկ վերահանձնման հնարավորությամբ):»:

**2)** 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15. Միջազգային շարժունակության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մինչև մեկ կիսամյակ տևողությամբ համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառելու մեկնած և վերադարձած ուսանողների առարկայական տարբերությունների հանձնումը կազմակերպվում է տվյալ դասընթացից տվյալ կրթաձևում գիտելիքի ստուգման ՀՊՏՀ-ում սահմանված կարգով (համակարգչային-թեստային, բանավոր): Ուսումնառության բոլոր ձևերի ուսանողները, բացառությամբ այս դեպքի, առարկայական տարբերությունները հանձնում են բանավոր:»:

**3)** 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-րդ կետով.

«16. Համակարգչային քննությունները գնահատվում են 12 միավորով, որոնք համապատասխանեցվում են 20 միավորին՝ բազմապատկելով համապատասխան գործակցով (20/12=1,66666667)՝ հարյուրերորդականի ճշտությամբ:»:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2019 թ. սեպտեմբերի 6
Երևան